ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

---

«11» 03 2013թ.. N° 3-2/0382-13

Ձեր «___» __________ 2013թ. N°_

0051, ք. Երևան, Կոմիտաս 49/3
Հեռ. (+37410) 20-14-61

*Ինֆորմացիայի ազատության կենտրոն*
*Հասարակական կազմակերպության*
*Իրավաբան Գևորգ Հայրապետյանին*
*(ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ,*
*Հեռ. 560-560)*

*Ի պատասխան Ձեր՝ 01.03.2013թ. թիվ 818 հարցման տեղեկացնում եմ, որ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանում 11.03.2013թ. դրությամբ առկա է 3574 (երեք հազար հինգ հարյուր յոթանասունչորս) գործող հասարակական կազմակերպությունների կոնտակտային տվյալները (իրավաբանական անձի գտնվելու վայրը), որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկություն կարող է տրամադրվել համապատասխան պետական տուրքի վճարման դեպքում: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 32-րդ մասի համաձայն՝ Իրավաբանական անձանց պետական միասնական և պետական գրանցամատյաններից մեկ սուբյեկտի վերաբերյալ պետական ռեգիստրում պահվող և ինտերնետային կայքում տեղադրված ամբողջական տեղեկությունների, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենների տրամադրման համար պետական տուրքը գանձվում է բազային տուրքի եռապատիկի չափով: Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ բազային տուրքի չափ է սահմանվում 1000 (հազար) դրամը: Պետական տուրքն անհրաժեշտ է վճարել հետևյալ հաշվի համարին՝ 900005016499:*

*Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ*

*Կատարող՝ Լ. Պողոսյան*
*հեռ. 20-14-32*